ղիկ), երկու կողմից մի մի տերեւ, որի նը-մանութիւնը տեսանք Բրդաձորի խոյակնե-րից մէկի վերայ: Ծաղկից վեր կանգնած է մի մարդ, մէջքից վեր կտրուած (Պատկ. 98), նեղ անդրավարտիկով սասանեան շրջա-նի եւ կօշիկներով. վերնազգեստը չուխայա-ձեւ, թեւը կախուած, հաւանօրէն ննջեցեալը:

Երրորդ երեսը ներքեւում նոյն ականթն է, ինչ որ նախընթաց երեսներում, բայց պատ-կերաքանդակը եղակի է եւ նմանը չէ պատա-հած ոչ մի տեղ. բաճկոնը սեղմ եւ մինչեւ ծնկները հասած, իրանը գօտիով սեղմած եւ գօտիի կապը առաջից կախ. ոտքերը ծած-կուած ականթի յետեւը, որ հելլենական ձե-ւակերպութիւն է (Պատկ. 99): Գլխարկի ձեւն անորոշ, փչացած լինելու պատճառով: Երկու ձեռքով գլխից վերեւ սկուտեղ ունի բռնած, մէջը երկու բոլորակ հաց՝ երես-ները ութ թեւանի խաչով զարդարած, որ նուէր է մատուցանում, արդեօ՞ք վերեւի անձնաւորութեան, որի ոտներն են միայն ե-րեւում տարօրինակ կօշիկով (սանդա՞լ): Մեզ համար միանգամայն մութ է քանդակի նշա-նակութիւնը:

Չորրորդ երեսին ներքեւում նոյն ա-կանթն է եւ նորա գլխին կոթաւոր մի սլաք, սուր ծայրը դէպի վեր (Պատկ. 100), հաւա-նօրէն նոյն սրածայր եռանկիւնիների կամ սլաքների նշանակութեամբ, ինչ որ տեսանք Թալինում (Պատկ. 70–71):

ԺԲ.

Մի կարեւոր կոթող էլ ունինք Մաստա-բայում, Արագածի արեւմտեան փէշերին, Թալինից եւ Աղիամանից քիչ դէպի արեւ-մուտք: Տեղի մասին չունինք աւելի հին տե-ղեկութիւն, քան Է. դարի կէսերը, երբ չինուած է այժմ էլ դեռ եւս կանգուն եկե-ղեցին, Թէոդորոս Գնունեաց (Գնթունե-աց՞) եպիսկոպոսի օրով, որը մասնակից ե-դաւ Ներսէս Գ.–ի դումարած ժողովին 645 թուականին: Շինութեան այս արձանագրու-թեան նոյնատիպը հրատարակել ենք մեր Գրչութեան Արուեստի Քարտէսի մէջ: Բայց նախ քան Է. դարը այստեղ պէտք է մի աւելի հին եկեղեցի եղած լինի, որի ապացոյցն է այն դերեզմանական կոթողը, որի հնութիւնը մինչեւ Ե. դար կարող է հասնել եթէ ոչ աւե-լի վաղ: Այստեղ մի երեսին (Պատկ. 101) տեսնում ենք բազիլիկ եկեղեցիներին յատուկ պիլաստրների վերայ պայտաձեւ կամար, եւ նորա տակը լուսոյ պատկով մի ֆիգուր, տա-բարագրարար շատ եղծուած վիճակում, ձա-խով աւետարան բռնած եւ աջով օրհնու-թեան նշան, որ Յիսուսն է: Կամարի գլխին քառանկիւնի շրջանակի մէջ մի առիւծ՞ խա-զաղ վիճակում, կողքին մի մարդ կանգնած ձեռքը վերան, նշանակութիւնը պարզ չէ մեզ համար, շատ նման Կայիրէի կոպտական թանգարանի No. 1693 մնացորդին: Պի-լաստրների վերայ երեւում են եւ յունարէն գրաֆիտներ, բայց նրանք կապ չունին կո-թողի ծագման հետ: Կոթողներից ոչ մէկը գրութիւն չունի:

Երկրորդ երեսը տալիս է մեզ ակնյայտնի աղերս բազիլիկ ոճի հետ, որ ինչպէս ք-նից ցոյց տալիս ենք Զ. դարի վերջերից տեղի է տալիս ազգային ոճին: Այստեղ տեսնում ենք զոյգ բոլորակ կիսասիւների մէջ ձողա-բարձ մի խաչ, պորտում եւ թեւերի ծայրե-րին ներսից մի մի գնդակ: Ապա աւելի բարձր Յիսուսի անդրին (Պատկ. 102): Այս հաւա-սարակող եւ գնդակներով խաչի ճիշդ նմա-նը տեսել ենք Պետերբուրգի Էրմիտաժում, իբր վաղ բիւզանդական արուեստի մի մնա-ցորդ՝ ժամանակը 400 թուականով նշանակ-ուած: Այս մասին մենք գրել ենք այլ առթիւ մեր Հաւուց Թառի Ամենափրկիչը աշխատու-թեան մէջ:* Իսկ բոլորակ կիսասիւներն էլ մատնանշում են բազիլիկ ոճի հոսանքը, ինչ-պէս Տիկորի դրան կիսասիւներն են (տես Սարչ. Պատկ. 368):

Բայց հետաքրքրական ուրիշ ապացոյց-ներ է տալիս կոթողի հնութեան մասին եր-րորդ երեսը (Պատկ. 103), նոյն պիլաստրնե-րի մէջ ձողաբարձ, հաւասարակող եւ գնդ-ակներով խաչը, աւելի բարձր քառանկիւնի շրջանակի մէջ՝ բոյսի կամ ծաղկի երկու կող-մից իրար դիմաց երկու թռչուն, մի մոտիւ, որ երեւան է գալիս փոքրիկ փոփոխակնե-րով Դ.–Զ. դարերի դիպտիխների եւ սար-կոֆագների վերայ,** բայց նաեւ Հայաստա-նի նոյն շրջանի քրիստոնէական արուեստի մէջ իբրեւ կենդանութեան ծառի կամ աղ-

*Մեր Հաւուց Թառի Ամենափրկիչը. եր. 38:

**Kraus. Geschichte der christlichen Kunst. I. 99,253. Kaufman. Christ. Archeol. 294, 311-313, 506.